

Ամրտուլ, արդէն հին դարերէն մը սրբազան եւ արտաքին ուսումներու, պատուաստուած Սիւնեաց Գաղտցի վրայ, բաւական արդիւնաւոր կեանք մ'ունեցած էր: Իր մատենադարանը, որ անծանօթ չէր Դաւրթ Անյաղթի թարգմանած գործերուն, արդեամբ կը ծոխանար, Ամրտուլու Առաջնորդ, Բարսեղ Վրդ.ի ջանքերով:

Բարսեղ կամ Բասիլ, որ «էր այր երեւելի եւ մեծանուն», ծանր, մեծ զոհողութիւններով սրբեց մտաւոր ամուլթեան նախատինքը Ամրտուլ ճակտէն.² Վանքը շինեց, դարձեալ վայելացուց եւ սկսաւ մշակել արտաքին գիտութիւնները, որոնց գլխաւորներն էին Քերականութիւն եւ Փիլիսոփայութիւն, միշտ Անյաղթի խրթին եւ մթին թարգմանածներուն վրայ: Բարսեղ շատ աշակերտներ հասցուց, արտաքին գիտութիւններու ճաշակը ծանչցընելով անոնց, որոնց մէջ գլխաւորապէս կը յիշուին Ներսէս Բեղլու, եւ ասոր աշակերտներէն Մելքիսէթ Վժանցի, որ Մովսէս Տաթեւացի՝ Շինող եւ ուսումնասէր կաթողիկոսի ատեն Էջմիածնի մէջ հաստատեց արտաքին գիտութեանց դասը՝³⁰ աշակերտներով՝ արեղայ եւ աշխարհական խառն:

Առաքել Դաւրիթեցիի պատմութեան հետաքրքրական գլուխը (ԻԹ) կը կազմեն Բարսեղ

1 «Այլ եւ էր ինքն Բարսեղ Վարդապետն ի գաւազանէն՝ որ ի Տաթեւացւոյն յառաջ եկեալ եւ սերեալ» (Ա. Դաւրիթեցի ԳԼ. ԻԹ):

2 «Յորում ժամանակի էր յաջորդ եւ առաջնորդ, պետ եւ գլուխ վարդապետաց տեղւոյն այնմիկ ոմն վարդապետ Բարսեղ անուն, որ էր այր երեւելի եւ խիստան եւ յուլ տղերքաց քեր. եւ նոյն վանքն Ամրտուլ յառաջադոյն խրթին եւ յոռի շինեալ էր եւ այն եւս խարխալեալ էր ի հնութենէ, սա զամենայն շինուածոն միահողոյն քակեաց եւ ինքն վերստին հիմնարկեալ շինեաց եւ կատարեաց զբովանդակն, զեկեղեցին, եւ տներն եւ զայն, որ ի նոսա.» (նոյն, տնք):